

ձեռնադրէ «... բարձր հրամանաւ Սուրբ Էջմիածնի», Մալիզուա երկիրին Ֆարսկայ եպիսկոպոսական աթոռին համար (Վանատուր = Վահան վրդ. Յովհաննէսեան, Յուսաբեր. 19 Հոկտ. 1938. ԻՊ. տարի, Թ. 169)։ Այս սերտ յարաբերութիւնները և կապերը քանի որ գոյութիւն ունէին և երկու եկեղեցիներու միջև համերաշխութիւնը կատարեալ էր, Յովհաննէս Թիւթիւնճի չէր կրնար հաւատածաւալ գործունէութեամբ Հապէշիստան երթալ։

Իսկ ուրիշ եկեղեցիի մը հաշուոյն ի՞նչ պէտք ունէր հայ եկեղեցական մը քարոզչութիւն ընելու։ Եւ ո՞րը կրնար ըլլալ այդ եկեղեցին, եթէ ոչ կաթողիկ եկեղեցին, որուն համար կրօնածաւալ գործունէութիւն մը կեանքը վտանգի դնել պիտի նշանակէր, քանի որ Հապէշները խիստ լարուած էին օտար քարոզչութեան, մանաւանդ կաթողիկ հաւատածաւալ գործունէութեան դէմ. որ ամբողջ երկիրը տակնուվրայ ըրած և նոյնիսկ քաղաքային կռիւններու պատճառ եղած էր։

Այս խառնակութիւնները, որոնց պատճառ եղած էր կաթողիկ կղերին հաւատածաւալ գործունէութիւնը, Ժէ. դարուն վերջերը, երկիրը բոլորովին օտարատեաց դարձուցած էին։

Մինչև ԺԵ. դարուն կէսերը Հապէշիստան փակ երկիր մըն էր Եւրոպացիներուն համար, թէև Հռոմ, ինչպէս այլուր, հոն ալ փորձած էր միջամուխ ըլլալ կրօնական գործերու։

Յլորենատիոյ եկեղեցական ժողովին (1440) Ղըպատիները և Հապէշներն ալ ներկայացուցիչներ զրկած էին, քաղաքական ակնկալութիւններով, որոնք ձախողանքի յանգած էին։

Սակայն Հռոմ քաջալերուած էր այս առաջին